

## Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն Ք.Ր.ՈՆ.Ի.Կ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆԻ խմբագրական մարմինը գործին նախնական ծրագրերն են կարգադրություններն աւարտած է և նիւթերու ուսումնասիրութիւնն յանձնած մասնագէտ աշխատակիցներու Մայիսին կը սկսի Ա. հատորին տպագրութիւնը: Բաժանորդագրուիլ փափաքողները խմբագրութեան գիմելու են ալժմէն. Արդեան փողոց, թ. 61. Երևան. 10 բուլլի կանխավճարով:

Հարկ կը տեսնենք անդրադառնալ մեր լեզուի ՈՒՂ.ՂԱԳՐԱԿԱՆ հարցին զոր արծարծեց Երևանի մամուլն անգամ. շեշտածը դուռնաբացութիւններ էին, այսինքն անտեղութիւնները: Հայկական պետութիւնն և Մայր հայրենիքի մէջ գրական դասակարգը գիտակից է այդ շարափոխութեան որ կատարուած ու պարտադրուած է քանի մը ծայրայեղներու կողմէն:

Ոչ նպատակ և ոչ մէկ ուղղութիւն ունի այդ խաթարումը՝ եթէ ոչ պառակտում սերմանել հոգիներուն մէջ որ լեզուի ազդեցութեամբ կը զգան իրենց ցեղակցութիւնն և եղբայրութիւնը: Հայ լուսաւորութեան առաքելներ երկու դար առաջ շարացուցին սննդամթերքի ազատումը. կը մնայ որ հայ պետութիւնն ալ իր հատուկ մասով որ առաջ վերջ գնէ այդ անտեղի և նորարարական նորութեան և վերադառնալ մարտկան զրին հետ մարտկան ուղղագրութիւնը որ սքանչելի կերտուած մ'է որպէս հնութեան գանձ. և այսպէս ոչ միայն հայ միտքն է որ պիտի հրճուի, այլ նաեւ լոյրը հայազէտ աշխարհի տարբեր ամենուրեք: Ուղղագրութեան վերանորոգութիւնը պիտի դիւրացնէ ոչ միայն Հանրադիտարանի լեզուական հարցերը այլ նաեւ Երևանի մէջ կազմուած Գիտութիւններու յանձնախումբը՝ որուն պաշտօն տրուած է հետազոտել և հաշիւ բառերը՝ որոնք այնուհետեւ ընդհանուր գործածութեան պիտի անցնին պարտադիր հանգամանքով:

ԱՐԳԻ ԳԱՍԱԿԱՆՆԵՐՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ կը յառաջէ հայ պետական հրատարակութեան կողմէ: Գովելի ձեռնարկին մէջ ուղղագրութեան վերջն է որ կարծիք կու տայ մեզի: Արդէն լոյս տեսած են Գլխաւորի տաղերն և Պարոնեանի ամբողջական գործը (3 հատոր) աշխատանքով Ալազանի և Կրկնի, որոնք պատրաստած են նաեւ Մեծարեւոյցի երկերու ժողովածուն: Այդ ալ լոյս կը տեսնէ Մայիսին՝ բանաստեղծին մահուան 25ամեակին (Յուլիս 1908-1933): Զոփուրեանի և Թուրթուրեանի խմբագրութեամբ ալ Ե. Օսեանի երկերու ժողովածուն (մէկ մասը): Ս. Յարութիւնեան կը հրատարակէ Ստեղծութեանցի գործերը: Վ. Տէրեանի ցարդ լոյս տեսած 4 հատորներուն վրայ պիտի աւելնայ հինգերորդ մը շուրջ 400 անտիպ քերթուածներով: Զարեց պատրաստած է Յ. Թումանեանի երկերուն ամբողջական ժողովածուն (մաս մը ցարդ անտիպ): Կոյնին խմբագրութեամբ լոյս պիտի տեսնեն նաեւ «Զրոյցները» Յ. Թումանեանի՝ զոր գրի առած է իր դուստրը Կուարդ Թումանեան (Գրական թերթ)էն:

Կ. ԲԱՍՄԱՆԻՆ «Հայկական դրամներ»ու շուրջ հմուտ դասախօսութիւն մ'ըբաւ փետրուար 5ին Սեբեկ Մուրադեան վարժարանին մէջ հոն բազմութեան մը ներկայութեան, հայկականց շրջանէն մինչեւ Գաշակցական հանրապետութեան օրերը:

Հարկ է ըսել թէ նման դասախօսութիւններ իրենց

փրկարար ազդեցութիւնը կը գործեն մեր ժողովուրդին վրայ, վերապրեցնելով քաղաքակրթութեան և փառքի գեղեցիկ օրերը:

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն.Ք.Ր.ՈՆ.Ի.Կ. - Փարիզի մէջ նորատպ հետաքրքրական տօն մըն էր Mutualitéի մէջ կատարուածը (6 փետր.): Զանազան ազգերու կարգին որոնք իրենց բնիկ տարան ու երգը կը ցուցադրէին՝ երեցաւ հայ խումբն ալ, արեւելեան լայն վարտիներով և ապարոշի ձեւով զգալիներով: «Quotidien» թերթը կը գովէր մեր երգերը կրօնաշունչ և ողբական ցոլքը և պարերուն աշխուժութիւնը:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻՒՄԻՒՄԻՒՄԻՒՄ (18 փետր.) Սեբեկ մեր Մուրադեան վարժարանին մէջ տեղի ունեցաւ յարգանքի հանդէս մը ի պատիւ տեսչի Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեանի: Բարեմաղթական ուղերձներու և զգալիան աշխատութեանց նուիրումէն զատ՝ աշակերտները ի ներկայութեան իրենց ծնողաց և վարժարանին բարեկամներուն՝ մեծ յաջողութեամբ ներկայացուցին «Առաջին անգամ ի Փարիզ» գաւէշը, «Misanthropie» ի Ա. և «Avare» ի վերջին արարուածները:

ՈՒՍ. ԵՐԿԱՍ, Ուսմանիոյ նախկին Կախարարական փետր. 23ին այցելեց Սեբեկ մեր Մուրադեան վարժարանը՝ Սեբեկի նախկին Մարգարան Գեորգ փր. Բենի հետ: Հայաստան երեւելի Ուսմանի սիրաւիր ընդունելութիւն կատարուեցաւ ուսման ազգ. քայլերը գով և նոյն լեզուով ուղերձով և ոտանաւորով:

Փարիզի Հայ Տեղեանց Միութիւնն ալ ընդունելութիւն մ'ըբաւ Ուսման և հանդիսաւորապէս անոր նուիրեց այս տարուան իր հաստատած մրցանակը՝ պատկերահամար Հայ մշակութի մասին հրատարակած գիրքը:

ՄԱՐՍԻՒԼԱՆԱՅ ԳԱՂՈՒԹԻՒՄԻՒՄԻՒՄԻՒՄԻՒՄ (25ին տարւած պարահանդէսի մը առթիւ) տեղւոյն քաղաքական Վ. Տէր. Ս. Ուսման գովեց ի սօսած է հայոց մասին՝ փրանսահայ դարասոր յարաբերութեան պատմական դրուագներով:

Ուղերձի և Քուրդի անուններուն հետ յիշած է Անտան հայը որուն անունն կցուած կը մնայ դեռ Rue d'Arménie փողոցի անունը, ինչպէս այդ քաղաքին մէջ առաջին անգամ բացուած առաջին սրճարանը Փարիզին հայուն ձեռքով 1672ին. և տարի մը վերջ, 1673ին, հոն հաստատուած հայկական տպարանը (Ոսկան Վ. ի ձեռքով): Դարունակելով իր գրուածները մինչեւ 1922ի հազարաւոր գաղթականները, չմոռցաւ յիշել Հ. Վ. Սահակի նուիրը՝ ֆրանսական վերջին տարիներու աղէտին ի դարման, որով շնորհակալութեամբ փակեց իր խօսքերը:

ԱՆԱՐԱՏ ՅԱՂՈՒԹԵԱՆ ՓՈՅՐԵՐՈՒ ՈՐԵԱՆՈՅՐԸ (ի Սէն Կլոտիէ) Փարիզի Մուրադեան վարժարանի «Պէշքեթաշիկ» թատերասրահին մէջ տուաւ (Մարտ 15) սիրուն հանդէս մը երգի, թատրոնի, մարզանքի եւս: Փարիզի ժողովուրդը հրճուեցով տեսաւ հուրէ տարէ իրուած այդ ծաղիկներուն վրայ շնորհ բարոյական կըրթութեան, հայ լեզուին և հարտար արուեստներուն:

Կուրազեան կոյս հոգիներու պաշտօնն և դերը սրբան թանկագին է մեր սերունդներուն բարեք դաստիարակութեան: Երանի թէ մեր համայնքներն ըմբռնեն անոր հիմնական կարեւորութիւնը և ըստ այնմ օգնեն նման գեղեցիկ միութիւններու գործին՝ բարոյական և նիւթական նպաստով:

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Սահակեան Գ. Տորք. — ԱՌԱՋՆՈՐԴ որ կը պարունակէ Բժշկական, Կախարական, Աստղական, Տիւրքական ծանօթութիւններ, Բժշկական բառարան, օգտակար գիտելիքներ. էջ 63. տպ. Մասիս. Պոլսէջ, 1924:

Արանասեան Յ. Գ. (քաղեց). — Մատենաշար «Գիտութիւն և Գիտելիք» թ. 1) ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԸ, էջ 32. - թ. 2) ՊԱՏՈՒԱՍՏ ԵՒ ՅՕՏՈՒՄ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐՈՒ, էջ 55. տպ. Ֆրոյման. 1931:

Պոտոլեան Հ. Մ. — ԿԱՐՄԻՐ ԼՈՒՍԻՆ. պատմութիւններ (հունգարերէն. Voros Hold, elbeszélések) էջ 136. տպ. Ֆրոյման - Սեփուրգ. 1931:

Ալիկեան Հ. Կերես. — ԳԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՄԻԹԱՐԵԱՆ ԳՊՐՈՅՐ. Ազգ. մատենադարան. հտ. ՃԼԳ. Արտատպ. նոր խմբագրութեամբ «Հանդէս Ամսօրեայ» է 1932 թիւ 1-2 և 5-6. էջ 387: 365-387 գրքին համառոտութիւնը գերմաներէն: Գին՝ 4 Զուրց ֆր. Վիեննա, Միլիթ. տպ. 1932: — ԵՂԻՇԵ ԵՒ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ. մատենագրական-պատմական ուսումնասիրութիւն: Մասն Ա. Արտատպ. մանր փոփոխութիւններով «Հանդէս Ամսօրեայ» է 1931 թ. 1-12 և 1932 թ. 5-6: էջ 399: 371-399 գրքին համառոտութիւնը գերմաներէն: Գին՝ 4 Զուրց ֆր. Վիեննա, Միլիթ. տպ. 1932:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ. հր. «Հայրենիք» էջ 131. Պոսթոն, 1932:

Զարմուշիկ Օ. — ԳՈՐԾ ԵՐԿԵՐԻ ՏԱԿ (քերթուածներ). էջ 64. Գին 5 ֆր. Սոփիա, տպ. Պալլըգեան, 1932:

Յակոբեան Յովսէփ. — ՀԱՍԱՏԱՅԵԱԼԻՆ ԽՈԿՈՒՄԸ. հետեւողութեամբ անդրկացի Եւնիկ բանաստեղծին. էջ 88: Գին՝ 50 դուրուշ. Կ. Պոլիս, Սեփուրգ տպ. 1933:

Սմբատ Բիւրատ (Տէր Ղազարեկ). — ԱՐԱՐԱՏՐԻ ԱՐԾԻՐԸ - ՎԱՐԴԱՆԱՆՔ. Ողբերգ. 5 արար և 4 պատկեր. Բ. տպ. հր. Կ. Տօնիկեան գրատան «Սիհուն» մանչի. թ. 6. էջ 76: Գին՝ 5 ֆր. Պէյրութ, 1933:

Արանասեան Խաչիկ Վրդ. — ՈՒՂԵՅՈՅՑ (կրօնական). (Իր ֆահանայական ձեռնագրութեան 25ամեակին առթիւ). էջ 163. Պէյրութ, Կաթ. տպ. 1932: — ԿԵՐԵՐՈՂ ԵՐ. ՏԵՐ ԿՈՄԵՏԱՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ. էջ 17. Պէյրութ, Կաթ. տպ. 1930:

ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ Պատարագի. Տպ. «Արար» Հալէպ, 1932:

Հ. Յ. Մ. Բ. — ԱՂՈՐԹԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ. 1931 և 1932 (ամսական թերթիկներ տօնացոյցով և բարեպաշտական հրահանգներով) Կ. Պոլիս:

Ե. Տօրպեան. Թարգմ. և Հրատ. — ԿԱՐԻՔԵՐԻՐԸ, ամերիկացի հռչակաւոր գաղտնի ոստիկանին ամենալիբերլին արկածները: Թիւ 1. - Մարդասպան լոյսին գեղքը. էջ 28. տպ. «Ազատ». Պէյրութ, 1933: - Թիւ 2. - Դրամանկեղեկութիւնը որչըր. տպ. «Հրապարակ». Պէյրութ, 1933:

Մանուկեան Պրոֆ. Յակոբ. — ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՌԱՂՈՒԹԻՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ (Թէգիաներ կուտարայի պատմութեան ինտիմալ տարած կարգացում գեղարուած). հայ - ռուս. և գերմաներէն: էջ 21. Գին՝ 1 ռ. Երևան, 1933:

Շահագիր Երուանդ. — ԳԻՒՄՆ ՄԻՔԱՅԻԼ ԿԱՐԱՆԳԵԱՆԻ. հր. Մեղանեան ֆոնդի. Հ. Ս. Խ. Հ. Լուսնոգիւմար. էջ 392: Գին՝ (լաթակազմ) 8 ռ. Երևան, 1932:

ՀԱՅ ՏԱՐԱԳՐԵԼՈՅ ՈՂՋՈՅՆԸ (Ողջոյն քեզ, Մարիամ). Հայնարեց Յովս. Վ. Գարայ-ձեան. Կաթ. տպ. Պէյրութ, 1933:

Միքայիլեան Գ. — ՔԱՅԼԵՐԳ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ (Marseillaiseի եղանակով). տպ. Գուլէ. Հալէպ, 1930:

Միքայիլեան Ա. (նկարեց). — ՏԻԳՐԻՍ ԳԵՏԻ ԿԱՄՈՒՐՁԵ. տպ. (Ետագոյն) Տիգրան Յակիրի ծախքով և հոգածութեամբ: Գին՝ 3.80 դուրցերական (ուղեծախսով հանգերծ): Գիմել՝ D. Spear. P. O. Box 94 W. Weehawken N. Y. (U. S. A.)

Macler Frédéric. — Chrestomathie de l'Arménien Moderne avec Vocabulaire (Bibl. de l'Ecole Nationale des langues orientales vivantes) pag. 394. 1932. Prix 100 Frs. Libr. Orientaliste Paul Geuthner, 13, Rue Jacob, (VIe). Imprimerie Massis, 208 bis, Rue Lafayette, Paris.



# ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ - ՎԵՆԵՏԻԿ

## ԱՐԱԳ ԵՒ ԱՆԹԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՏՁԵԼԻ ԳԻՆԵՐ

Տպարանս կը ստանձնէ ամէն տեսակ հրատարակութիւն Հայ  
և Եւրոպական լեզուներով, ինչպէս նաեւ Վ. Ա. Ճ. Ա. Թ. Ա. Կ. Ա. Կ. Ա. Կ.  
Թ. Ու. Գ. Թ. Ե. - Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Կ. - Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Կ. - Բ. Ա. Ք. Տ. Ե. Գ. Ու. Կ. Ա. Ս. Գ. Ե. Ե.  
Պ. Ա. Ք. - Ա. Յ. Տ. Տ. Մ. Ս. Ե. - Պ. Ի. Տ. Ա. Կ. Ե. և այլն, և այլն: ❀ ❀



IMPRIMERIE ARMÉNIENNE

St. Lazare VENISE (Italie)



## ԲՈԼՈՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

### Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՍԱՏ

### ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՊԱԼԱՏ

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրապալատը այն օրգանն է որ կատարում է Հ. Ս. Խ. Հ. սահմաններում տպագրուած  
բոլոր հրատարակութիւնների, գրքերի, բրոշիւրների, պարբերականների, թերթերի եւն. բիբլիոգրաֆիկ մշակումը:

Հ. Ս. Խ. Հ. Պետգրապալատը միաժամանակ գրադրում է Միջազգային հրատարակութիւնների փոխանակու-  
թեամբ, և այդ ճանապարհով աշխատում է ճոխացնել Խորհրդային Հայաստանի գրադարանները օտար գրականու-  
թեամբ, սպասարկել գիտական, մասնագիտական և Լուսաւորութեան Ֆոնտի աշխատակիցների հայերէն և օտար  
գրականութեան պահանջներին:

Հ. Ս. Խ. Հ. Պետգրապալատը իր տրամադրութեան տակ ունի հայերէն և ռուսերէն հին ու նոր հրատարակու-  
թիւնների ճոխ միջոց, որ կազմում է փոխանակութեան ֆոնտը: Մասնաւորապէս ուշադրաւ է հայագիտական  
գրականութիւնը, Լամբիանի ազգագրական խորոյժածու Հայոց պատմութեան, Ղազարեան մատենագրանի հրա-  
տարակութիւններ եւն. եւն. եւն.:

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրապալատը ուղարկում է նաեւ Խորհրդային Հայաստանում և Միութեան սահման-  
ներում լոյս տեսած բոլոր հրատարակութիւնները:

Հ. Ս. Խ. Հ. Գրապալատը խնդրում է բոլոր հայ հեղինակներից, գրափաճառներից և գրասէրներից իրենց  
հրատարակութիւններից Չական օրինակ ուղարկել Գրապալատին, ամբողջացնելու համար գաղութանայ գրակա-  
նութիւնը: Ուղարկուած բոլոր գրքերի փոխարէն պահանջեցէք համապատասխան արժէքով գրականութիւն:

Գաղութանայ գրական և գիտական լուսաւորութեան աշխատակիցները իրենց գտնուած քաղաքների պետական  
գրադարաններից թող պահանջեն մեր գրականութիւնը և նրանց մղեն, մասնաւորապէս օտար արեւելագիտական  
հաստատութիւններին ու գրադարաններին կապ պահպանելու մեղ հետ և պահանջելու մեր հայագիտական և ընթա-  
ցիկ գրականութիւնը:

Պահանջեցէք Գրապալատի օրգան «Տպագրութեան տարեգիր»-ը որ յոյց է տալիս Խ. Հայաստանում ամբողջ  
տարում լոյս տեսած գրքերը, թերթերը, օրագիրները և յօդուածները:

Ամէն գրութիւն և առարկում ուղղել հետեւեալ հասցէին:

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրապալատ, Երեւան, Կոմիտասի տուն:

PALAIS du LIVRE

ERIVAN

U. R. S. S.

Բաժանորդագրուեցէք և ծաւալեցէք Հայ մամուլի երիցագոյն ներկայացուցիչը «ԲԱԶՄԱՎԷՊ»-ը,  
վստահ ըլլալով որ մեծապէս պիտի նպաստէք հայ լեզուի և գրականութեան սրբազան դատին,

հայ ցեղի անաղարտ պահպանութեան և յաւերժացումին:

Բաժնեգինն է՝ տարեկան Տոլար 3.50

—

կրթ. հաստատութեանց համար Տոլար 1.75